ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

05 մարտ 2021թ.Ք. ԻՋԵՎԱՆ

Նիստին ներկա էին խորհրդի անդամների երկու երրորդը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2020-21թթ. ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի ամփոփում: (Զեկ. Վ. Ա. Աղաբաբյան)
2. 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփում: (Զեկ. Վ. Ա. Աղաբաբյան)
3. Հաղորդում ամբիոններում 2-րդ կիսամյակի դասընթացների փաթեթների առկայության և վերանայման ընթացքի մասին: (Զեկ. ամբիոնի վարիչներ)
4. Հաղորդում որակի կառավարման հանձնաժողովի լիազոր ներկայացուցիչ ընտրելու հարցի մասին: (Զեկ. Վ. Ա. Աղաբաբյան)

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի պաշտոնակատար, խորհրդի նախագահ Վ. Ա Աղաբաբյանը: Նա ներկաներին տեղեկացրեց, որ հերթական նիստում նախատեսված է 4 զեկուցվող հարց՝ համաձայն ֆակուլտետի խորհրդի հաստատված աշխատանքային պլանի: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ .

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ հանդես եկավ խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց 2020-2021 ուստարվա I կիսամյակի քննաշրջանի ամփոփումը: Զեկուցողը նշեց, որ քննաշրջանը իրականացվել է նախապես հաստատված ժամանակացույցի համաձայն, ֆակուլտետի 66

ուսանողներից քննություններին և ստուգարքներին մասնակցել են 65-ը, որի արդյունքում ստեղծվել է հետևյալ պատկերը.

- 5 ուսանող ստացել է միայն գերազանց գնահատականներ,
- 27 ուսանող ստացել է միայն գերազանց և լավ գնահատականներ,
- 19 ուսանող ստացել է խառը գնահատականներ,
- 3 ուսանող ստացել է միայն բավարար գնահատականներ.
- անբավարար գնահատական ստացել է 12 ուսանող:

Ֆակուլտետի բացարձակ առաջադիմություն կազմել է 81,82 %:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ .

Հ. Ասատրյանը, Հ. Մխիթարյանը, Ի. Փիրումյանը, Մ. Սարհատյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ .

Կիրառական արվեստի ֆակուլտետի 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ հանդես եկավ խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփումը: Նշվեց, որ երկրորդ լուծարքային շրջանի ավարտին երկու ուսանող չի կարողացել ապահովել դրական գնահատական: «Դիզայն» կրթական ծրագրի երկրորդ կուրսի ուսանող Ռ. Ենգիբարյանը «Քանդակագործություն-1» առարկայից կուտակել է կրեդիտ, իսկ նույն կուրսի ևս մեկ ուսանող՝ Շ. Շահնազարյանը, հեռացվել է մասնաճյուղից՝ ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերելու պատճառով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

Ք. Մխիթարյանը, Հ. Ասատրյանը, Ի. Փիրումյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Կիրառական արվեստի ֆակուլտետի 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի լուծարքային շրջանի արդյունքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ հանդես եկան ամբիոնի վարիչները: Նրանք նշեցին, որ առարկայական ծրագրերը մշտապես վերանայվում են: Այժմ դասավանդվող դասընթացների փաթեթների զգալի մասը առկա են, իսկ մի քանի ծրագրեր վերջնական խմբագրման փուլում են: Զեկուցողները նշեցին, որ, մասնագիտությունների առանձնահատկություններից ելնելով, հաճախակի են իրականացվում փոխադարձ դասալսումներ, քննարկումներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

Հ. Մխիթարյանը, Վ. Աղաբաբյանը, Ք. Մխիթարյանը:

Վ. Աղաբաբյանը նշեց, որ ստեղծվել են կրթական ծրագրերի վերանայման խմբեր, որոնց աշխատանքի ավարտին կրկին անհրաժեշտություն է առաջանալու առարկայական փաթեթների վերանայման:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ամբիոններում դասընթացների առարկայական փաթեթների առկայության և վերանայման ընթացքը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Վ. Աղաբաբյանը: Նա նշեց, որ անհրաժեշտություն կա մասնաճյուղի որակի կառավարման հանձնաժողովում ունենալ ֆակուլտետի լիազոր ներկայացուցիչ: Դեկանը նշեց, որ բոլոր ամբիոններում իրականացվել են քննարկումներ, լսել են բոլոր

առաջարկությունները: Ի վերջո, որպես ֆակուլտետի որակի կառավարման լիազոր ներկայացուցիչ, առաջարկվել է «Դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի» ամբիոնի ասիստենտ Քրիստինե Մխիթարյանի թեկնածությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հ. Ասատրյան, Հ. Մխիթարյանը. Մ. Սարհատյանը:

Արտահայտվողները արժևորեցին առաջադրված թեկնածուին, կարևորեցին որակի հանձնաժողովի դերն ու գործունեությունը և հույս հայտնեցին, որ ֆակուլտետի կողմից առաջադրված թեկնածուն կամուրջ կհանդիսանա հետագա փոխգործունեության համար:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Որպես ֆակուլտետի կողմից որակի կառավարման լիազոր ներկայացուցիչ հաստատել Ք. Մխիթարյանի թեկնածությունը:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. Ա. Աղաբաբյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք. Հ. Մխիթարյան